



ԱԶԽԱԹԻՒՆՆԵՐԻ որդւոց մէջէն, որով Աստուած օրհնած էր զՅովհաննէս Զէլէպի, վերջիններէն էր Յակոբ Զէլէպի Տիւղեան (ծն. 1793 Յունուար 3ին): Ի բնէ գեղեցիկ եւ չքնաղագիւտ ձրիւք զարգարուած, ի մասնաւորի նկարչութեան շատ սէր կը ցուցընէր: Արքունի պալատն յաճախելու ատեն ցուցած յաջողակութիւնը Սուլթանին միտքը գրաւեց, որ չարաղէտ արկածներէն ետքը՝ փողերանոցի մեծ պաշտօնին յարմար անձ մը կը փնտռէր, եւ գտաւ զՅակոբ Զէլէպի: Յակոբ ինք զինքն իւր նախորդաց անունը ժառանգելու արժանի ցուցուց, եւ այնպէս սիրելի էր Ապտիլ Բէճիտի՝ որ զինքն ու իրմով բոլոր Տիւղեանքն վերստին առաջին պայծառութեան հասցընելու